

**ՈՌԴԱՆԱՀԱԿՈԲՅԱՆ**

ՀՀ վարչական դատարանի դատավոր

**ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՖԻԿՑԻԱՅԻ ԷՎՈԼՅՈՒՅԻԱՆ  
ԵՎ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՔԻ ՀԱՍՏԱՐԳՈՒՄ  
ԱՅՆ ՆԵՐԴՆԵԼՈՒ ՈՒՂԻՆԵՐԸ**

Հռոմեական իրավունքն ի սկզբանե հանդիսացել է իին և ազգային նեղ նկարագրով բավականաշափ պարզ հանակարգ, սակայն այն զարգացել է Հռոմի հզորացմանը և կյանքի ու հասարակական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց։ Այն փոխել է իր բնույթը՝ վերակառուցվելով անհատապաշտության սկզբունքներով, նրա հենաքարերն են դարձել անձի ազատությունը, սեփականության ազատությունը, պայմանագրերի և կտակի ազատությունը։

Տնտեսական հարաբերությունների զարգացման արդյունքում գործարար հարաբերությունների մասնակիցներն էին հանդիսանում տարրեր ազգությունների առևտրականներ, և հռոմեական մագիստրները պարտավոր էին այդ հարաբերությունների ժամանակ ծագող վեճերը լուծելու նպատակով մշակել համապատասխան նորմեր։ Հին ազգային հռոմեական իրավունքն այդ նպատակի համար պիտանի լիներ չեր կարող։ Անհրաժեշտ էր ամեն տեսակի տեղական և ազգային առանձնահատակություններից զերծ նոր իրավունք, որը կարող էր միատեսակ բավարարել հռոմեացիներին և հույներին, եզիզտացիներին և գալերին, այսինքն՝ գործարար և այլ բնույթի հարաբերությունների բոլոր մասնակիցներին՝ անկախ նրանց ազգությունից։ Անհրաժեշտ էր ոչ թե ինչ որ ազգային իրավունք, այլ համաշխարհային, համընդհանուր իրավունք, և հռոմեական իրավունքը ներմուծվում է այդ համընդհանության սկզբունքով, միջազգային այնպիսի սովորույթներով, որոնք դարերով մշակվել էին միջազգային հարաբերություններում։ Հռոմեական իրավունքը տևական ժամանակով ձևավորված այդ սովորույթներին տվել է իրավաբանական պարզություն, ուժ և կենսունակություն։

Անընդհատ զարգանալով՝ հռոմեական իրավունքը դարձավ ողջ անտիկ աշխարհի համընդհանուր իրավունքը։ Արդյունքում բազմաթիվ պետություններ, հռոմեական իրավունքը հարմարեցնելով իրենց սոցիալ-տնտեսական պայմաններին, իրականացրին հռոմեական իրավունքի ու-

ցեացիա (reception- փոխառություն):

Ֆրանսիացի հայտնի իրավագետ Ռ. Դավիթի խորքերով՝ Հռոմեական կայսությունն ունեցել է փայլուն քաղաքակրթություն, և հռոմեական հանձարն ստեղծել է աշխարհում նախադեպը չունեցող իրավաբանական համակարգ։

Հռոմեական իրավունքի բազմաթիվ իրավական եզրույթներ մինչ օրս օգտագործվում են բազմաթիվ երկրների օրենսդրության մեջ։ Այդորինակ երկարակեցության պատճառը դրանց առանձնահատուկ կարևորությունն է ողջ իրավական համակարգի համար։ Եվ այդ տեսանկյունից բացառություն չէ իրավաբանական ֆիկցիան։ լստիներն առաջարկությունը բարգմանությամբ «ֆիկցիա» նշանակում է հորինվածք, գոյություն չունեցող, անիրական, ոչ ռեալ։

Որպես իրավաբանական տեխնիկայի միջոց, մշակվելով հռոմեացի իրավաբանների կողմից, ֆիկցիան դարձավ հասարակական հարաբերությունները կարգավորող առավել յուրահատուկ գործիքներից մեկը, որը, ձևավորված լինելով հնագույն ժամանակներում, հայտնի ու որոշակի չափով տարածված է ժամանակակից բոլոր իրավական համակարգերում և ոչ միայն չի կորցրել իր նշանակությունը, այլև նկատելի ընդլայնել է կիրառման ոլորտները։

Ֆիկցիայի կիրառումն ի սկզբանե հատուկ է եղել առավելապես հռոմեական մասնավոր իրավունքին, սակայն, հարկ է նշել, որ այն բնորոշ է եղել նաև հանրային իրավունքին։ Հռոմեական իրավունքում իրավաբանական ֆիկցիայի հասկացության սահմանում չի տրվել, ոչ Պայի ինստիտուտներում, ոչ Ուլպիանոսի դիգեստներում, ոչ էլ այլ իրավական ակտերում ու հռոմեացի իրավաբանների աշխատություններում տեղ չի գտել իրավաբանական ֆիկցիայի հասկացության նկարագիրը։

Տարաբնույթ իրավական սահմանումների ու օրենսդրության վերլուծության արդյունքներով իրավաբանական ֆիկցիան, քերևս, կարելի է բն-

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

րոշել որպես իրավական հնարք, որը ենթադրում է փաստի գոյությունը՝ անկախ դրա իրական լինելուց:

Ֆիկցիայի մասին ամբողջական ու համարժեք պատկերացում կազմելու համար, թերևս, անհրաժեշտ է պարզել դրա ծագման տրամաբանությունը՝ ինչպիսի պայմաններում է ձևավորվել այն, որոնք են եղել դրա՝ իրավունք ներմուծելու շարժադրիներն ու նախատակները, որքանով կարող են սուտը, կեղծիքը, հորինվածքը թույլատրելի համարվել ճշմարտության ու արդարության ոլորտում:

Ֆիկցիան ունի գոյության երկար պատմություն: Առավել վաղ ժամանակաշրջանում ֆիկցիայի ի հայտ գալն իրավունքում հնարավորություն է ընձեռնել վերլուծելու այդ երևույթը, դրա արտահայտման սկզբնական ձևավորման տրամաբանական կանոնները:

Ֆիկցիայի դասական տրամաբանության էությունն առավել հստակ նկատելի է դառնում հռոմեական իրավունքում իրավաբանական անձի զաղափարի կայացման ժամանակ: Հին հռոմեական իրավունքը նախատեսում էր իրավունքներ միայն անհատների համար: Մինչեւ, հռոմեացի իրավաբանները նկատել էին, որ որոշ դեպքերում գույքը չի պատկանում առանձին քաղաքացիների կամ մի խումբ ֆիզիկական անձանց, այլ ամրակցված է միավորումներին, կազմակերպություններին:

Կազմակերպություններին իրավունքներ պատկանելու, քաղաքացիական շրջանառությունում նրանց մասնակցության փաստերը ճանաչելով՝ հռոմեացի իրավաբանները, այդ կազմակերպությունների կարգավիճակի խնդրի լուծումը չգունդուղ օրենքներում, ստիպված են եղել փնտրել՝ համեմատություն անցկացնելով քաղաքացիական իրավունքի սուբյեկտների՝ քաղաքացիների, ֆիզիկական անձանց կարգավիճակի հետ և հաստատել, որ կազմակերպությունը գործում է անձի փոխարեն, անձի կարգավիճակով (*personae vice*):

Հռոմեական իրավունքին հայտնի չի եղել «իրավաբանական անձ» հասկացությունը: Կազմակերպության սահմանման համար լատիններենում անգամ չի եղել հասուն տերմին: Հետագայում հռոմեացի իրավաբանների կողմից մշակվել է կազմակերպության իրավական էությունը: Նրանք կազմակերպությունները համեմատում էին մարդու, ֆիզիկական անձի հետ և նկատում էին, որ կազմակերպությունները համեմատում էին մարդու, ֆիզիկական անձի հետ և նկատում էին, որ կազմակերպությունները գործում են *personae vice* (անձի փոխարեն, որպես անձ), *privatorum loco* (առանձին անձանց փոխարեն, առանձին անձանց վիճակում): Դրանում կարելի է տեսնել «իրավաբանական անձի ֆիկցիայի տեսության» սաղմը, որն ի հայտ է եկել միջնադարում և իր տարածումը գտել արտասահմանյան իրավունքի տեսության մեջ:

Կումանական կազմակերպությունների իրավական կարգավիճակի հիմքում դրվել է ֆիզիկական անձանց իրավաբանական բնույթը: Այսպիսվ, կազմակերպությունը, չհանդիսանալով ֆիզիկական անձ, գործում էր «որպես թե» ֆիզիկական անձ՝ քաղաքացի, մարդ: Քաղաքացիական շրջանառության մեջ կազմակերպությունը՝ «որպես թե» ֆիզիկական անձ, հանդիսանում էր համարյա ֆիզիկական կազմակերպության նոր «երևակայական» հորինվածքի տրամաբանության արդյունք:

Օրենքի օգնությամբ ծագած ֆիկցիան սահմանվել է Կորնելիոսի կողմից *fictio legis Corneliae*: Ցիվիլ իրավունքին (ius civile) համապատասխան իրավունակությամբ օժտված էր միայն Հռոմի քաղաքացու կարգավիճակ ունեցող անձը: Գերի ընկած հռոմեացին դառնում էր ստրուկ՝ կորցնելով ոչ միայն ազատությունը, այլ նաև իրավունակությունն ու Հռոմի քաղաքացիությունը: Հենց այդ պատճառով, եթե անձը մահանում էր գերի եղած ժամանակ, ապա նրա գույքը չէր դառնում ժառանգական և չէր կարող ժառանգվել ո՛չ ըստ օրենքի, ո՛չ ըստ կտակի (կտակը կորցնում էր իր ուժը անձի գերի ընկելու պահից): Ինարկե, դա արդարացի չէր գերի ընկած անձի ժառանգմերի համար, այդ իսկ պատճառով Կորնելիոսի օրենքով ներմուծվեց ֆիկցիա (fictio legis Corneliae), որի համաձայն՝ գերության ժամանակ մահացածը համարվում էր մահացած գերի դառնալու պահից, այսինքն՝ այն պահից, եթե նա դեռևս համարվում էր ազատ և հանդիսանում էր Հռոմի քաղաքացի:

Ֆիկցիայի նշանական դրամատիկա ունի անհանդաները հետագայում ընդլայնվեցին, իրենց աշխատություններում անդրադարձել են ոուս իրավագետներ Մ.Բարտոշեկը և Ս.Լ.Մուրմզելը: «In omnibus partibus iuris is, qui reversus non est ab hostibus, quasi tunc decessisse videtur, cum carpus est» - իրավունքի բոլոր ճյուղերի համար կիրառելի էր, որ քննամիների մոտից չվերադարձ գերին համարվում էր մահացած գերի դառնալու պահից<sup>3</sup>: Այդպիսով, գերի դառնալու պահից անձին մահացած համարելու ֆիկցիան սկսեց կիրառվել ոչ միայն նրանց նկատմամբ, ովքեր մահացել էին գերի եղած ժամանակ, այլ նաև բոլոր գերիների նկատմամբ: Սակայն, եթե գերին հայրենիք էր վե-

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

բարանում, ապա այդ դեպքում գործում էր մյուս ֆիկցիան. «postliminium fingit eum qui captus est semper in civitate fuisse», ըստ որի՝ պայմանականութեն հիմք էր ընդունվում այն, որ, կարծես թե, նա գերի չէր եղել<sup>4</sup>:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում իրավաբանական հաջորդ ֆիկցիան. «...receptum est, quotiens per eum, cuius interest conditionem non impleri, fit, quo minus impleatur, ut perinde habeatur, ac si impleta condicio fuisset» - եթե նա, ով շահագրգիռ չէ պայմանի վրա հասնելուն, խոչընդոտում է դրա վրա հասնելուն, պայմանը համարվում է վրա հասած<sup>5</sup>: Սա այն ֆիկցիաներից է, որը, անցնելով բազմադարյա պատմական ճանապարհ, իր արտացոլումն է ստացել տարբեր երկրների քաղաքացիական օրենսգրքերում: Թեև այդ երկրների օրենսդիրները կատարելագործել են նշված ֆիկցիան, այդուհանդերձ դրա իմաստը, ըստ էության, փոփոխության չի ենթարկվել: Այս կարգի ֆիկցիային կարելի է դասել նաև հետևյալ դրույթը. «In omnibus causis pro factumo accipitur id, in quo per alium morae sit, quo minus fiat» - բոլոր վեճերում համարվում է, որ մյուս կողմի ձգձգման պատճառով տեղի չունեցած իրադարձությունն արդեն տեղի է ունեցել<sup>6</sup>:

Ժառանգական հարաբերությունների իրավական կարգավորման ոլորտում ֆիկցիան նույնապես լայնորեն կիրառվել է: Այսպես, կտակի բովանդակությունը մեկնաբանելիս կիրառվել է հետևյալ հատուկ ֆիկցիան. «Quae in testamentumo ita sunt scripta, ut intellegi non possint: perinde sunt, ac si scripta non essent» - անհասկանալի բառերը կտակում համարվում են չգրված, կամ, եթե կտակը պարունակում է իրարամերժ կարգադրություններ, դրանք երկուսն են կորցնում են իրենց ուժը<sup>7</sup>:

Հին Հռոմում ճնապիրված հաջորդ ֆիկցիան, համաձայն որի՝ ցանկացած արարք, որը կտարկում է իր մարմինը պաշտպանելու նպատակով, համարվում է իրավաչափ - «Guod quisgue ob tutelam c-oris rui fecil, iure fecis-se existimatur», ըստ էության, հանդիսանում է անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտի նախատիպը, որը հետագայում փոխառվեց տարբեր երկրների իրավական համակարգերում:

Ինչպես վերը բվարկված, այնպես էլ չիշատակված իրավաբանական ֆիկցիայի այլ տեսակների վերլուծության արդյունքում կարելի է հետևություն անել այն մասին, որ հոռմեական իրավություն իրավաբանական ֆիկցիայի առաջին և հիմ-

նական բնորոշ գիծը հանդիսանում է այն, որ ֆիկցիան նախատեսում էր գոյություն ունեցող հանգամանքները ճանաչել որպես գոյություն չունեցող և, ընդհակառակը, գոյություն չունեցողը՝ որպես գոյություն ունեցող:

Հռոմեական ֆիկցիայի երկրորդ բնորոշ գիծն է հանդիսանում այն, որ դրա կիրառման բնորոշ դեպքերում հին հոռմեացի իրավաբանները գիտակցել են ֆիկցիայում պարունակվող դրույթների սուտ, կեղծ, ոչ իրական լինելը:

Հռոմեական ֆիկցիայի հաջորդ բնորոշ գիծը ֆիկցիաներում պարունակվող կեղծ դրույթների իրավաբանական հերքման անհնարինությունն էր: Իհարկե, փաստացի կարելի էր ապացուցել, որ գերի ընկած հոռմեացին ողջ է, վնասվածքներով փոխանցված գույքն իրականում վերադարձվել է կամ կտակի մեջ անհասկանալի բառերն իրականում գրվել են, բայց այդ ամենը չի ունեցել որևէ իրավաբանական նշանակություն: Այլ կերպ ասած՝ դատարանը իրավաբանական ֆիկցիայի հիման վրա որոշում ընդունելիս ուշադրություն չէր դարձնում դրանց հակասող, սակայն իրականությանը համապատասխանող ապացույցների վրա:

Այսպիսով, ուսումնասիրելով իրավաբանական ֆիկցիայի վերը նկարագրված օրինակները, կարելի է եզրակացնել, որ հոռմեական իրավություն դրանք իրականացնում էին ոչ միայն իրավություն չկարգավորված հասարակական հարաբերությունների վրա իրավական նորմերի տարածման գործառույթ, այլև օգտագործվում էին որպես իրավաբանական տնտեսման միջոց, այսինքն՝ դրանք իրենցից ներկայացնում էին Հին Հռոմի իրավական համակարգում ծագող տարաբնույթ հարցերի առավել արագ և պարզ լուծման օրինական միջոցներ:

Այլ հարց է, որ հոռմեացիներն իրավաբանական ֆիկցիան օգտագործում էին նույնիսկ այնտեղ, որտեղ հնարավոր էր, ավելին՝ արդարացի կլիներ իրավակարգավորումներն իրականացնել նաև առանց դրա: Օրինակ՝ կտակի մեջ անհասկանալի բառերը չգրված համարելու մասին ֆիկցիայի փոխարեն կարելի էր օգտագործել հետևյալ ճնակերպումը. կտակի պայմանների մեկնաբանման ժամանակ ուշադրության չեն արժանանում դրանում պարունակվող անհասկանալի բառերը: Որևէ իրավական դրույթ ճնակերպելու համար «զլուխ կոտրելու» փոխարեն հոռմեացիները պարզապես դիմում էին իրավաբանական ֆիկցիայի օգնությանը:

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Ընդ որում, թեև ֆիկցիան լայն տարածում ուներ իրավունքի տարրեր ճյուղերում, այդուհանդեմ իրավական նորմերում երբեւ չի օգտագործվել «ֆիկցիա» տերմինը: Այդ հանգամանքը, սակայն, բնավ չի նստացրել ֆիկցիայի դերն ու նշանակությունը կամ մերժել դրա գոյությունը, քանզի բովանդակային կտրվածքով այն հաստատում կերպով ներդրվել է իրավական համակարգ:

Ինչպես վերը նշվեց, հռոմեական իրավունքում ֆիկցիաները դրսորդում էին ոչ միայն մասնավոր, այլ նաև հանրային իրավունքում հետևելով հանրահայտ այն բանաձևին, համաձայն որի՝ հանրային իրավունքն ի նկատի ունի պետության շահը (ad statum rei romanae spectatē): Դրանք հաճախ իրենցից ներկայացնում էին պետության կամայականությունները, ինչպես նաև պետական իշխանության կողմից օգտագործվում էին այս կամ այն քաղաքական որոշումներն ի կատար ածելու նպատակով:

Այսպես, քարոյականության, քաղաքականության և ընտանելական կյանքի բնագավառներում, ավանդական հռոմեական հիմքերի վերականգնման նայատակով, հռոմեացի քաղաքական գործիչ, պրինցիպատի հիմնադիր Օկտավիան Օգոստոսի նախաձեռնությամբ մշակվեց հասուլ օրենք՝ Հուլիոսի և Պապի - Պոպեյի օրենքները: Այն բաղկացած էր երեք բաժնից: Առաջինը՝ «Ամուսնության կարգի մասին» Հուլիոսի օրենքն էր, երկրորդը՝ «Ծնանալու մասին» օրենքը, և երրորդը՝ «Ծքեղության ծախսերի մասին» օրենքը: Նշված նորմատիվ ակտերը խստագույնս սահմանում էին վերին խավերի ամուսնանալու պարտականությունը, իրավունքների սահմանափակումներ չամուսնացածների և անզավակների համար, արտոնություններ երեխա ունեցողների համար («Երեք երեխաների» օրենքը), ընտանիքի գլխի իշխանության ուժեղացում և շնանալու համար խստ պատիժ:

Իրավաբանական ֆիկցիան բնորոշ էր ոչ միայն նյութական իրավունքին, այլ նաև այն իր արտացոլումն էր ստացել դատավարական նորմերում: Հին Հռոմում առավել լայն տարածում ունեին, այսպես կոչված, պրետորական ֆիկցիաները, որոնք իրենց արտահայտությունը ստացան ֆիկտիվ հայցերում: Ֆիկտիվ հայցեր կամ ֆիկցիայով հայցեր (actiones ficticiae) էին կոչվում այնպիսի հայցերը, որոնց բանաձևերում պրետորը հանձնարում էր դատավորին թույլատրել իրականում գոյություն չունեցող փաստերի գոյությունը կամ, ընդհակառակը, առաջարկում էր գոյություն ունեցող

փաստերը համարել որպես գոյություն չունեցող: Հին Հռոմում ֆիկցիան լայնորեն կիրառվում էր նաև պրետորների<sup>10</sup> կողմից: Նրանք ֆիկցիան օգտագործում էին այն դեպքերում, երբ «խիստ» իրավունքն ընկնում էր ակնհայտ տրամարանական հակասության մեջ «լավ բարքերի», «խողի», «արդարության» մասին բնական պատկերացումների հետ:

*Այսպիսով, հռոմեական իրավունքում իրավաբանական ֆիկցիան կարելի է սահմանել որպես առանձնահատուկ հնարք, որը կեղծ դրույթը որպես ծշմարիտ ճանաչելն է. այն չունի հերքման հնարավորություն և իրավաբանորեն հնարավոր չէ հերքել:*

Իրավաբանական ֆիկցիայի առանձնահատկությունը, ըստ իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա.Վ.Մարկինի, կայանում է նրանում, որ այն, ըստ Էուրիպի, իրենց ներկայացնում է նորմատիվ կանոնի վերածված միտումնավոր սուտ, որը թվում է, թե ոչ մի կերպ չի համապատասխանում իրավական արդարության խիստ տրամարանությանը, և որն անհնար է պատկերացնել առանց ծշմարտության վրա հենվելու, ինչպես ել այն բնութագրես՝ օրյեկտիվ, իրավաբանական, դատական:

Ժամանակի ընթացքում իրավաբանական գիտության մերողների հետ միասին կատարելագործվել են նաև ֆիկցիայի ինստիտուտը և դրա կիրառման ոլորտները: Ի թիվս բազմաթիվ իրավահարաբերությունների, ֆիկցիայի միջոցով կարգավորվող հարաբերությունների թվին դասվեցին նաև գրական և գեղարվեստական ստեղծագործությունների պատկերացնության առնչվող հարաբերությունները: Այսպես օրինակ՝ «Գրական և գեղարվեստական ստեղծագործությունների պաշտպանության մասին» 09.09.1886թ. Բերնի կոնվենցիայի<sup>12</sup> 3-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ ստեղծագործությունը համարվում է իրատարակված միաժամանակ մի քանի երկրներում, եթե իրատարակված է եղել երկու կամ ավելի երկրներում առաջին իրատարակումից հետո 30 օրվա ընթացքում: Նշվածով սահմանվում է իրավաբանական ֆիկցիա ստեղծագործության միաժամանակյա իրատարակման վերաբերյալ:

*Ֆիկցիան հանդիպում է նաև միջազգային պայմանագրերում, որոնք հանդիսանում են ոչ միայն միջազգային մասնավոր, այլ նաև միջազգային հանրային իրավունքի աղբյուրները: Այսպես, Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին 23.05.1969թ. Վիեննայի կոնվենցիայի 23-րդ հոդ-*

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

վածի 2-րդ կետի համաձայն՝ եթե վերապահումն արվել է վավերացման, ընդունման կամ հաստատման ենթակա պայմանագիրը ստորագրելիս, այն պետք է պաշտոնապես հաստատվի վերապահում արած պետության կողմից իր համար այդ պայմանագրի պարտադիր լինելուն իր համաձայնությունն արտահայտելիս: Այդ դեպքում վերապահումը արված է համարվում նրա հաստատման օրը<sup>13</sup>:

Իրավունքի յուրաքանչյուր առանձին ճյուղում ֆիկցիայի կիրառումը կատարում է տարբեր գործառույթներ և իրացնում օրենսդրի քաղաքականությունը տարբեր ոլորտներում:

Որպես օրենսդրական տեխնիկայի հնարք՝ ֆիկցիան փոխարինում է իրականությանը և օգտագործվում է միայն այն դեպքում, եթե մնացած բոլոր միջոցներն ու հնարքներն այլևս ապարդյուն են, իսկ օրենսդրի գործնքացը պետք է հաղթահարի որոշակի դժվարություններ: Հենց դրանում է արտահայտվում ֆիկցիայի բացառիկությունը. այն ստիպում է գոյություն չունեցողն ընդունել որպես գոյություն ունեցող և հակառակը:

**Ֆիկցիայի՝ որպես օրենսդրական տեխնիկայի միջոցի՝ նշանակությունը կոչված է, որպեսզի համատեղի օրենսդրական քաղաքականության և օրենսդրական տեխնիկայի պահանջները և իրավական կոնստրուկցիաների միջոցով ապահովի իրավական նորմերի տեխնիկական ձևակերպման արդյունավետ միջոցները:**

Թեև ֆիկցիայի հասկացության լեզվաբանական նշանակությունն ունի բացասական իմաստ, այդուհանդերձ չպետք է բերագնահատել ֆիկցիայի դերն ու նշանակությունը իրավունքում: Ֆիկցիայի կարևորագույն նշանակությունը՝ օրենքին ներհատուկ, փաստերի, իրավիճակների, հասարակական հարաբերությունների արդյունավետ կարգավորումն է այն դեպքերում, եթե դրանք դուրս են մնում բնականն կարգավորումից. դրանք կայունություն են ներմուծում հասարակական հարաբերությունների կարգավորման մեջ, սահմանափակում են չիմնավորված կամայական որոշումների ընդունման հնարավորությունը, նպաստում են քաղաքացիների իրավունքների պաշտպանությանը, իրավունքի համակարգը դարձնում են առավել դյուրին և տնտեսող:

Ամբողջացնելով վերոգրյալ՝ կարելի է հետևություն անել, որ իրավաբանական ֆիկցիան գոյություն չունեցող փաստ է, որը, սակայն, որոշակի հանգամանքների ազդեցության ուժով օրենսդրի

կողմից ճանաչվում է իրական, գոյություն ունեցող՝ դրա ուժով դառնալով պարտադիր: Ֆիկցիան իրավունքի ձևավորման միջոց է: Այն սահմանում է իրավաբանական նորմ, որը դառնալու է պարտադիր բոլորի համար և հորինված փաստը պաշտպանելու է ցանկացած վիճարկումից:

Այսպիսով, ֆիկցիան հանդիսանում է իրականությանը հակասող իրավաբանական գիտություն, որը գիտակցարար օգտագործվում է մի շարք իրավաբանական հետևանքների հասնելու համար: Կարելի է ասել, որ ֆիկցիայի կիրառումը հանգեցնում է իրավունքում հորինվածքի ամրապնդմանը և հանդիսանում է օգտակար սուտ: Սակայն, այդ սուտը կանխամտածված սուտ է, սուտ՝ հանուն արդարության, քանի որ դրա միջոցով հաստատվում են այնպիսի հանգամանքներ, որոնք ապահովում են իրավաբանական հարաբերությունների արդարացը լուծումը: Ֆիկցիան գոյություն չունեցող երևոյթ կամ իրադարձություն է՝ իրավաբանական ընթացակարգերում ճանաչվելով գոյություն ունեցող:

Գտնում ենք, որ հասարակական հարաբերությունների արդյունավետ կարգավորումն ապահովելու առումով իրապես մեծ է իրավունքում ֆիկցիայի նշանակությունը, և ամբողջությամբ իրավացի է S.Վ. Կաշանինան՝ ասելով, որ ֆիկցիաներն ունեն բացառապես իրավական նպատակներ, որոնցից ամենակարևորը ձգտումն է կարգ ու կանոնին և արդյունավետությանը<sup>14</sup>:

Ֆիկցիա-նորմներ են պարունակվում քաղաքացիական, քրեական, վարչական իրավունքներում, դատավարական նորմերում, և դրանց միջոցով կարգավորվող հարաբերությունները պարզապես անհնար է պատկերացնել առանց ֆիկցիայի կիրառման:

Քաղաքացիական իրավունքում ամրագրված ֆիկցիայի տեսակներից են, օրինակ՝ որդեգրումը, քաղաքացուն անհայտ բացակայող ճանաչելը, եթե նա իր մասին օրենքով սահմանված ժամկետում տեղյակ չի պահում, քաղաքացուն մահացած ճանաչելը՝ եթե օրենքով սահմանված ժամկետում նրա մասին որևէ տեղեկություն չկա: Բավականին մեծ քանակության ֆիկցիա է պարունակում նաև ժառանգական իրավունքը:

Քրեական իրավունքում արտացոլված ֆիկցիայի տեսակներից են հանդիսանում, օրինակ՝ կարծեցյալ պաշտպանության ֆիկցիան, դատվածության մարման կամ հանման ֆիկցիան: Կան նաև ընդհանուր բնույթի ֆիկցիաներ, սակայն դրանք քիչ են: Այդ ֆիկցիաներից առավել հայտնի

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

է հետևյալը. օրենքի չիմացությունը չի ազատում պատասխանատվությունից: Բավականին տարածված ֆիկցիայի տեսակ է հանդիսանում, այսպես կոչված, սոցիալապես պատասխանատու, միջին ողջամիտ, միջին բարեխիղճ մարդու ֆիկցիան, որի էությունը կայանում է նրանում, որ իրավունքի տարբեր ճյուղերի իրավական նորմերի, այդ թվում նաև քրեական նորմերի յուրաքանչյուր հասցեատեր ենթադրվում է այնպիսի մարդ, ով և կարող է, և ցանկանում է, և պարտավոր է դրսուրել իրեն այնպես, որպեսզի նրա վարքագիծը չխախտի համընդհանուր ճանաչում ունեցող նորմերը:

Ֆիկցիայի ամրագրումը հատկապես հանրային իրավունքում, հաշվի առնելով իրավունքի այս ճյուղի դերն ու նշանակությունը ինչպես հասրակության և դրա առանձին անհատների, այնպես էլ պետության շահերի համար, հուսալի միջոց է հանդիսանում վարչական մարմինների կամայականություններից և հատկապես անզործությունից անձանց իրավունքները պաշտպանելու առումով և ապահովում այդ իրավունքների պաշտպանությունն արդյունավետ ձևով իրականացնելու պատշաճ երաշխիք:

Վարչական մարմինների հետ հարաբերություններում ֆիկցիայի կիրառման էությունը, որպես կանոն, հանգում է հետևյալին. Եթե վարչական մարմինն իրեն ուղղված անձի դիմումով խնդրարկված հարցի առնչությամբ օրենքով սահմանված ժամկետում չի ընդունում որևէ որոշում, ապա դիմողի խնդրանքը համարվում է բավարարված:

Դեռևս 13-րդ դարի Հռոմի վերջին Պապերից մեկը՝ Բոնիֆացի 8-րդը (1294-1303), իր ուղերձներից մեկում արտահայտել է հետևյալ միտքը. «Լոռությունը համաձայնության նշան է» (լատ. *Silentium videtur confessio*), որը հետագայում ներմուծվել է եկեղեցական իրավունք<sup>15</sup>: Հենց այս հանրահայտ արտահայտությունն էլ, ըստ էության, ամփոփվել է մի շարք երկրների, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետության հանրային հարաբերությունները կարգավորող օրենսդրությունում կիրառվող ֆիկցիայի մեջ, որի ուժով ակնկալվող վարչական ակտի ընդունված լինելը վարչական մարմնի դրսուրած անզործության ուղղակի հետևանք է:

Ֆիկցիան բավական լայնորեն կիրառվում է նաև դատավարական նորմերում: Դատավարական իրավունքի նորմերում ֆիկցիայի գոյության հարցերին անդրադարձել է ճանաչված դատավարագետ Ի. Զայցևը՝ բերելով մի շարք օրինակներ:

Այսպես, պարտադիր պահանջ է հանդիսանում դատարանի կողմից գործին մասնակցող անձանց դատական նիստի ժամանակի և վայրի մասին ծանուցումը: Հակառակ դեպքում այն դատական ակտն անվերապահորեն բեկանելու հիմք է: Իսկ ինչպես պետք է վարչել այն դեպքում, եթե գործի քննության ընթացքում շահագրգիռ անձը փոխել է բնակության վայրը՝ այդ մասին չհայտնելով դատարանին: Այդ դեպքում բավարար հիմքեր կան ենթադրելու, որ քաղաքացին խուսափում է դատարանից: Այդպիսի իրավիճակում հնարավոր է և նպատակահարմար միայն մեկ տարրերակ. ծանուցագիրն ուղարկել նախկին հայտնի հասցեով, որից հետո կատարված համարել անձի ծանուցագիրը լինելու դատավարական պարտականության կատարումը և զործը քննել ըստ էության<sup>16</sup>:

Ի. Զայցևի կողմից նկարագրված դատավարական ֆիկցիայի օրինակը տեղ է գտել նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածում, որով կարգավորված են դատական նիստի ժամանակի և վայրի մասին դատավարության մասնակիցների պատշաճ ծանուցման հարցերը: Նշված հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ դատավարության մասնակիցները և նրանց ներկայացնությունները, ինչպես նաև այլ անձինք պարտավոր են դատարանին հայտնել գործի քննության ընթացքում իրենց հասցեի փոփոխության մասին: Նման հաղորդման բացակայության դեպքում ծանուցագիրն ուղարկվում է նրանց վերջին հայտնի հասցեով և համարվում է հանձնված, բեկուզ հասցեատերն այդ հասցեում այլևս չի բնակվում կամ չի գտնվում:

Դատավարական իրավունքում նկարագրված ֆիկցիայի ամրագրումը փաստորեն հանդիսանում է զործի քննության ընթացքում իրենց ծանուցման հասցեի փոփոխության մասին դատավարության մասնակիցների կողմից դատարանին հայտնելու պարտականությունը չկատարելու իրավական հետևանքը:

Ֆիկցիա-նորմ է հանդիսանում նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 8-րդ մասը: Այսպես, օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասով սահմանելով հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուց հետո՝ երկշաբարյա ժամկետում հայցադիմումի պատասխան ներկայացնելու պատասխանողի պարտականությունը՝ նույն հոդվածի 8-րդ մասում ֆիկցիայի միջոցով օրենսդիրը սահմանել է այն իրավական հետևանքը, որը վրա է հասնում այդ

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

պարտականությունը չկատարելու արդյունքում:  
Համաձայն օրենսգրքի 83-րդ հոդվածի 8-րդ մասի՝  
պատասխան չներկայացնելը դատարանը կարող է  
գնահատել որպես պատասխանողի կողմից հայց-  
վորի վկայակոչած փաստերի ընդունում:

Բավական հետաքրքիր ֆիկցիա է ամրագր-  
ված ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի  
90-րդ հոդվածի 2-րդ մասում, համաձայն որի՝ վար-  
չական վարույթի ընթացքում կողմերի հաշտության  
համաձայնության գալը համարվում է հայցվորի  
հրաժարում հայցից:

Ֆիկցիայի հասկացության, իրավունքում  
ֆիկցիայի կիրառման անհրաժեշտության անդ-  
րադարձել են այնպիսի հայտնի իրավագետներ,  
ինչպիսիք են Դ.Ի. Մելքոնը, Գ.Ս. Մենը, Գ.Ֆ. Դոր-  
միլոնտովը, Վ.Ի. Կամինսկայան, Վ.Մ. Գորշենևը,  
Ա. Նաշիցը, Վ.Բ. Խակովը, Լ.Ա. Դուշակովան,  
Ա.Պ. Զայցևը, Ռ.Կ. Լոտիփուլինը:

Ֆիկցիայի վերբերյալ բավական հետաքր-  
քիր դատողություններ է ներկայացրել Ա.Կ. Ռոմա-  
նովը «Անգլիայի իրավական համակարգը» վեր-  
տառությամբ գրքում՝ բերելով նաև այդ համակար-  
գում կիրառվող ֆիկցիայի օրինակներ: Ռոմանովի  
կարծիքով, եթե իրավունքում չօգտագործվի ֆիկցի-  
ան, իրավաբանորեն անհնար կլինի մարդկանց  
ժամանակակից տնտեսական գործունեությունը:  
Չէ<sup>1</sup> որ այն իրականացվում է հիմնականում իրա-  
վաբանական անձանց ձևով և նրանց անունից, իսկ  
վերջիններս ոչ այլ ինչ են, քան իրավաբանական  
ֆիկցիա: Իրավաբանական ֆիկցիաները կիրառ-  
վում են նրա համար, որ իրավունքը չհակասի ար-  
դարության պահանջներին, իսկ իրավական նորմե-  
րի կիրառման պրակտիկան չզրկվի ողջամտությու-

նից<sup>17</sup>:

Ամփոփելով սույն աշխատանքում ներկա-  
յացված նյութը՝ հանգում ենք այն եղակացության,  
որ ֆիկցիան՝ որպես իրավաբանական հնարք,  
հաստատում է որևէ փաստի գոյությունը՝ անկախ  
դրա իրական լինելուց, հանդիսանում է իրավական  
կարևոր ինստիտուտ և անհրաժեշտ է իրավական  
կանխատեսելի կարգավորում իրականացնելու  
մշակումունք:

Հավելենք նաև, որ իրավունքի ֆիկցիան ոչ  
թե իրավունքի անկատարության, բարդ իրավի-  
ճականերում առավել պարզունակ լուծումներ գտնե-  
լու և իրավունքի համընդհանուր սկզբունքներն ան-  
տեսելու արդյունք է, այլ նշանակած արժեքներին առա-  
վել համահունչ իրավակարգավորումներ ներմուծե-  
լու ցուցիչ: Ինչ խոսք, որոշակի դեպքերում, այդ  
թվում ապացուցողական գործընթացների կատա-  
րելագործմանը գուգահեռ, հնարավոր են նաև այդ  
ինստիտուտի կիրառման շրջանակների աստիճա-  
նական նեղացման միտումներ, սակայն դրանով  
բնավ չի նսեմացվում իրավունքի զարգացման ար-  
դի փուլում նշանակած ինստիտուտի արժեքը:

<sup>1</sup> Տե՛ս Ռենե Դավիդ. Основные правовые системы современности. М., 2003. С. 31.

<sup>2</sup> Տե՛ս Новицкий И.Б. Римское право. Изд. 6-е, стереотипное. – М., 1997. С. 60.

<sup>3</sup> Տե՛ս Бартонек М. Римское право. Понятия. Термины. Определения. М., 1989. С. 384.

<sup>4</sup> Տե՛ս Муромцев С.Л. Гражданское право Древнего Рима. М., 1883. С. 35-36.

<sup>5</sup> Տե՛ս Бартонек М. Римское право. Понятия. Термины. Определения. М., 1989. С. 386.

<sup>6</sup> Տե՛ս Бартонек М. Римское право. Понятия. Термины. Определения. М., 1989. С. 395.

<sup>7</sup> Տե՛ս Бартонек М. Римское право. Понятия. Термины. Определения. М., 1989. С. 429.

<sup>8</sup> Տե՛ս Бартонек М. Римское право. Понятия. Термины. Определения. М., 1989. С. 388.

<sup>9</sup> Տե՛ս http://sararov.bezformata.ru/listnews/yuliyia-i-papiya/12336269/

<sup>10</sup> Տե՛ս Պետական պաշտոնյա Հին Հռոմում, առաջացել է լատիներեն praetor, prae-ire բառից և նշանակում է գնալ առաջ, առաջնորդել:

<sup>11</sup> Տե՛ս Маркин А.В. Фикции в Римском праве: Логическая и правовая целесообразность, Вектор науки ТГУ. N 2(16), 2011. С. 243.

<sup>12</sup> Տե՛ս Бюллетень международных договоров. 2003. N 9. С. 5.

<sup>13</sup> Տե՛ս Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության Գերագույն սովետի տեղեկագիր. 1986. N 37, С. 11.

## ԱՐԴԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

<sup>14</sup> Տե՛ս Կապանինա Տ.Վ. Յուրիդическая техника: учебник. 2-е издание, пересмотренное, НОРМА ИНФРА – М, 2011. С. 202.

<sup>15</sup> Տե՛ս Նշված արտահայտության հմարավոր աղբյուրը Ենթադրաքար համելիսացել է հիմ հույն պոետ-դրամատուրգ Սոփոկլեսի (մ.թ.ա 496-406թ.թ.) «Տրաքինուիխները» դրամայի աֆորիզմից, որում հերոսը հարցնում է. «Մի՞թե դու չես հասկանում, որ լրությամբ դու համաձայնում ես մեղադրողի հետ», տե՛ս - [http://dic.academic.ru/dic.nsf/dic\\_wingwords/1535/%D0%9C%D0%BE%D0%BB%D1%87%D0%B0%D0%BD%D0%BB%D0%8B%D0%85](http://dic.academic.ru/dic.nsf/dic_wingwords/1535/%D0%9C%D0%BE%D0%BB%D1%87%D0%B0%D0%BD%D0%BB%D0%8B%D0%B5)

<sup>16</sup> Տե՛ս Զայցև Ի. Правовая фикция в гражданском процессе // Российская юстиция. 1997. N 1. C. 35.

<sup>17</sup> Տե՛ս Романов А.К. Правовая система Англии: Учеб. Пособие. 2-ое изд., испр. М.: Дело, 2002. С. 87-88.

### Օգտագործված գրականություն

1. Давид Р. Основные правовые системы современности. М., 2003. ёз 31.
2. Маркин А.В. Фикции в Римском праве: Логическая природа и правовая целесообразность, Вектор науки ТГУ. N 2(16), 2011. С. 243.
3. Новицкий, И.Б. Римское право. Изд. 6-е, стереотипное. – М., 1997. С. 60.
4. Бартешек М. Римское право. Понятия. Термины. Определения. М., 1989. С. 384, 386, 388, 395, 429.
5. Муромцев С.Л. Гражданское право Древнего Рима. М., 1883. С. 35-36.
6. Бюллстенъ международных договоров. 2003. N 9. С. 5.
7. Капанина Т.В. Юридическая техника: учебник. 2-е издание, пересмотренное, НОРМА ИНФРА – М, 2011. С. 202.
8. Романов А.К. Правовая система Англии: Учеб. Пособие. 2-ое изд., испр. М.: Дело, 2002. С. 87-91.
9. Зайцев И. Правовая фикция в гражданском процессе // Российская юстиция. 1997. N 1. С. 35.
10. Սովորական Անգլիական Հանրապետությունների Միության Գերազույն սովորությունների 1986. N 37, էջ 11:

#### Իրավական ակտեր

ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք:

#### Էլեկտրոնային կայքեր

1. [http://dic.academic.ru/dic.nsf/dic\\_wingwords/1535/%D0%9C%D0%BE%D0%BB%D1%87%D0%B0%D0%BD%D0%BB%D0%8B%D0%85](http://dic.academic.ru/dic.nsf/dic_wingwords/1535/%D0%9C%D0%BE%D0%BB%D1%87%D0%B0%D0%BD%D0%BB%D0%8B%D0%85)
2. <http://saratov.bezformata.ru/listnews/yuliya-i-papiya/12336269/>

### РЕЗЮМЕ

#### *Эволюция юридической фикции и способы ее внедрения в систему отечественного права*

Статья “Эволюция юридической фикции и способы ее внедрения в систему отечественного права” посвящена изучению, одной из институтов современной правовой системы, имеющей наиважнейшее научное значение - истории возникновения, эволюции юридической фикции и способам ее внедрения в систему отечественного права.

Автор в статье проанализировал наиболее ключевые аспекты эволюции отмеченного института, их историко-правовое значение и выявил наиболее существенные факторы, влияющие на вышеуказанную эволюцию, а также с помощью некоторых частных примеров показал не только теоретическое, но и практическое значение данного института.

### SUMMARY

#### *The evolution of the legal fiction and its ways of investment into the national legal system*

“The evolution of the legal fiction and its ways of investment into the national legal system” article is devoted to one of the institutions of the legal system which has a great topical and scientific significance-the research of the questions related to the origin of the fiction history, the evolution of the fiction and the possible ways of its investment into the national legal system.

In the article, the author had analyzed the key aspects of the above mentioned evolution of the fiction, its historical-legal significance and had discovered the main factors having great importance on that evolution, had showed not only theoretical, but also practical significance through some private examples.